



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 փետրվարի 2022 թվականի N 01-Ա

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի
ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի, Արովյան համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Արովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի երկրորդ նստաշրջանի հերթական առաջին նիստի հետևյալ օրակարգը.

1) «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյան համայնքի կազմում ընդգրկված համայնքների աշխատակազմերի (համայնքային կառավարչական հիմնարկների) գործունեությունը դադարեցնելու մասին.

3) Արովյան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմերը հաստատելու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

5) Արովյանի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

6) Արովյան համայնքի ծախսերը նախորդ տարվա բյուջեների համամասնություններով կատարելու համար համաձայնություն տալու մասին.

7) Փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին.

8) Արովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-23

Է. ԲԱԲԱՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ա. ԲԱՂԱԼՅԱՆ

Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Դ. ԶԱՐՈՅԱՆ

Տ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Ա. ՄԵՂՐՅԱՆ

Գ. ԳԱԼՍՅԱՆ

Պ. ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

Մ. ԳԱՄՊԱՐՅԱՆ

Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Տ. ԳԵՂԱՄՅԱՆ

Ձեռնպահ – 0
Դեմ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2022թ. փետրվարի 08
ք. Արուսեան



Է. ԲԱԲԱՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 փետրվարի 2022 թվականի N 02-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, Արովյան համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Ստեղծել «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ:
2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործողության մեջ է դրվում իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից կանոնադրությունը հաշվառելու պահից:

Կողմ-23

Է. ԲԱԲԱՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Դ. ԶԱՐՈՅԱՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Տ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԹԵՆԵՔԵԶՅԱՆ

Ա. ՄԵՂՐՅԱՆ

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գ. ԳԱԼՍՏՅԱՆ

Տ. ԳԵՂԱՄՅԱՆ

Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ

Պ. ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

Ձեռնպահ – 0

Դեմ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. փետրվարի 08
ք. Արովյան



Հավելված

Արդյան համայնքի ավագանու
2022 թվականի փետրվարի 08-ի
N 02-Ա որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ»**

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

2022թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արժվանի համայնքապետարանի աշխատակազմը» (այսուհետ՝ Աշխատակազմ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից ենթակա է հաշվառման:
2. Արժվան համայնքը բազմաբնակավայր համայնք է, որի կազմում ընդգրկված են տասնմեկ բնակավայրեր:
Արժվան համայնքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արժվան, Առինջ, Արամուս, Բալահովիտ, Գեղաշեն, Գետարգել, Կաթնաղբյուր, Կամարիս, Մայակովսկի, Պտղնի և Վերին Պտղնի համայնքների իրավահաջորդը: Արժվան քաղաքը միավորված համայնքի կենտրոնն է:
3. Աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք), «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, սույն կանոնադրության, Արժվան համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հիման վրա:
4. Աշխատակազմի նպատակը և խնդիրն է օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ Արժվան համայնքի ղեկավարին (այսուհետ՝ համայնքի ղեկավար), օրենքով ու Արժվան համայնքի ավագանու կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև՝ ավագանուն, վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովումը:
5. Աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է Արժվան համայնքի (այսուհետ՝ համայնք) անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:
6. Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և հանրային մատուցած ծառայությունների համար կարող են օրենքով սահմանված չափով և կարգով գանձվել պետական և տեղական հարկեր, տուրքեր և վճարներ:
Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում համայնքը:
7. Աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կնիք, դրոշմակնիքներ, ձևաթղթեր և այլ անհատականացման միջոցներ:
8. Աշխատակազմի լրիվ անվանումն է՝ **«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արժվանի համայնքապետարանի աշխատակազմ»** համայնքային կառավարչական հիմնարկ:

Կրճատ կարող է օգտագործվել՝ «Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմ» անվանումը:

9. Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ **Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ-1**: Փոստային դասիչն է՝ 2201, պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն է՝ **abovyan.kotayq@mta.gov.am**, պաշտոնական համացանցային կայքի հասցեն է՝ **<http://abovyan-kotayk.am/>**:

II. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ

10. Աշխատակազմի հիմնադիրը համայնքի ավագանին է (այսուհետ՝ ավագանի):

11. Ավագանին՝

- 1) ստեղծում է, ինչպես նաև վերակազմակերպում և դադարեցնում է Աշխատակազմի գործունեությունը.
- 2) հաստատում է Աշխատակազմի կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները.
- 3) որոշում է Աշխատակազմին հանձնվող գույքի կազմն ու չափը.
- 4) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված Աշխատակազմի գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան սահմանում է Աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունները.
- 5) հաստատում է Աշխատակազմի կառուցվածքը, հաստիքների քանակը և պաշտոնային դրույքաչափերը.
- 6) օրենքով սահմանված կարգով որոշում է Աշխատակազմին ամրացված գույքի օգտագործման, տնօրինման և տիրապետման կարգը.
- 7) հաստատում է համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (առկայության դեպքում՝ համայնքային հիմնարկների) կանոնադրությունները, հաստիքացուցակները և դրանցում կատարվող փոփոխությունները.
- 8) իրականացնում է օրենքով և Աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

III. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

13. **Համայնքի ղեկավարն** ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կնիք, որով հաստատվում են համայնքի ղեկավարի որոշումները, կարգադրությունները, ֆինանսական փաստաթղթերը, տեղեկանքները, պայմանագրերը, նախագծանախահաշվային փաստաթղթերը, օրենսդրությամբ սահմանված դեպքերում նաև՝ այլ փաստաթղթեր:

14. Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է Աշխատակազմի, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (առկայության դեպքում՝ համայնքային հիմնարկների) միջոցով, ինչպես նաև համայնքի ղեկավարի տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, վարչական ղեկավարների, քաղաքացիական աշխատանք կատարողների, անհրաժեշտության դեպքում նաև՝ պայմանագրային աշխատողների միջոցով:

Համայնքի ղեկավարի խորհրդականներին, օգնականներին, մամուլի քարտուղարին, վարչական ղեկավարներին, քաղաքացիական աշխատանք կատարողներին, պայմանագրային աշխատողներին ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ

պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում, նրանց միջև պարտականությունները քաշխում է համայնքի ղեկավարը:

15. Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն, որը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

Աշխատակազմի կառուցվածքում ընդգրկված են միայն «բաժին» տեսակի կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների նվազագույն թվաքանակը սահմանում է պետական լիազորված մարմինը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատակազմի կառուցվածքում կարող է ընդգրկվել առանձնացված ստորաբաժանում, որի կանոնադրությունը հաստատում է ավագանին:

Աշխատակազմի հաստիքացուցակում ընդգրկվում են նաև կառուցվածքային ստորաբաժանումներում չներառված համայնքային ծառայողները:

16. Աշխատակազմի հաստիքացուցակում ընդգրկված են տեխնիկական սպասարկման անձնակազմը, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարողները:

IV. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

17. Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է Աշխատակազմի քարտուղարը՝ օրենքներով, իրավական այլ ակտերով, ավագանու և համայնքի ղեկավարի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

18. **Աշխատակազմի քարտուղարը** համայնքային ծառայող է, հանդիսանում է համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմին:

19. Աշխատակազմի կնիքը գտնվում է Աշխատակազմի քարտուղարի մոտ, որով կնքվում են Աշխատակազմի քարտուղարի հրամանները, ժամկետային աշխատանքային պայմանագրերը, նրա կողմից տրված տեղեկանքները, օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթեր:

20. Աշխատակազմի քարտուղարը անմիջականորեն ենթակա և հաշվետու է համայնքի ղեկավարին:

21. Աշխատակազմի քարտուղարին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Աշխատակազմի բաժինների պետերը, կառուցվածքային ստորաբաժանումներում չներառված համայնքային ծառայողները:

22. Աշխատակազմի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Աշխատակազմի որևէ բաժնի պետ՝ համայնքի ղեկավարի որոշմամբ:

23. Աշխատակազմի քարտուղարը՝

1) ապահովում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը.

2) կազմակերպում և ապահովում է Աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների, խմբակցությունների կողմից համայնքի ավագանու որոշումների նախագծերի նախապատրաստմանը.

3) ապահովում է Աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը.

4) կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.

5) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրապարակումը.

6) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց հանրագրերի, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.

- 7) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև Աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ:
- 8) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ:
- 9) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների առաքումը ՀՀ Կոտայքի մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում:
- 10) օրենքով, իրավական այլ ակտերով կամ սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում կամ գործառույթների շրջանակում նշանակում և ազատում է աշխատակազմի աշխատողներին, այդ թվում՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:
- 11) օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ:
- 12) իրականացնում է օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
24. Աշխատակազմի քարտուղարը համայնքային ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝
- 1) մասնակցում է Աշխատակազմի կառուցվածքային, հաստիքային, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու նախապատրաստման աշխատանքներին:
 - 2) ապահովում է Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի, դրանցում փոփոխություններ կատարելու նախագծերի մշակման աշխատանքների իրականացումը:
 - 3) սահմանված կարգով ապահովում է Աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի և համայնքային ծառայողների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացումը:
 - 4) ապահովում է Աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և համայնքային ծառայողների ատեստավորում անցկացնելու համար անհրաժեշտ հարցաշարերի մշակման աշխատանքների իրականացումը:
 - 5) հաստատում է Աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար խմբի երկրորդ և երրորդ ենթախմբերի, ինչպես նաև կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ատեստավորման ենթակա համայնքային ծառայողների ցանկերը:
 - 6) ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում է իր անմիջական ենթակայության տակ գտնվող համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը:
 - 7) իրեն անմիջական ենթակա և հաշվետու համայնքային ծառայողների կողմից իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացրած կիսամյակային հաշվետվությունների վերաբերյալ տալիս է համապատասխան եզրակացություններ:
 - 8) կազմակերպում է աշխատակազմի անձնական գործերի վարման և անձնական գործերի առկա վիճակի ամենամյա ստուգման աշխատանքները:
25. Աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմի ղեկավարումը, աշխատանքի ընդունման, ազատման, խրախուսման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու և օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներն իրականացնում է Աշխատակազմի քարտուղարը:
26. Աշխատակազմի քարտուղարը պատասխանատվություն է կրում օրենքների, իրավական այլ ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԸ

27. Համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը համայնքային քաղաքական պաշտոն է: Համայնքի ղեկավարն ունի մեկ առաջին տեղակալ, որը ավագանու անդամ է:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալը փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:

28. Համայնքի ղեկավարը կարող է ունենալ ևս երկու տեղակալ:

Համայնքի ղեկավարի տեղակալներին պաշտոնի նշանակում է ավագանին:

Համայնքի ղեկավարի տեղակալներին պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

29. Համայնքի ղեկավարի տեղակալներն իրականացնում են համայնքի ղեկավարի կարգադրությամբ իրենց վերապահված բնագավառների գործառույթներ:

Համայնքի ղեկավարի տեղակալն օրենքով նախատեսված դեպքերում որպես համայնքի ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր:

30. Համայնքի ղեկավարի տեղակալները չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

31. Համայնքի ղեկավարի տեղակալը՝

1) համակարգում է համայնքի ղեկավարի կողմից իրականացվող քաղաքականության՝ իրեն հանձնարարված բնագավառներում իրականացվող աշխատանքները:

2) համայնքի ղեկավարին տեղեկություններ և վերլուծություններ է ներկայացնում իրեն հանձնարարված բնագավառների իրավիճակի մասին:

3) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների նախագծերի նախապատրաստմանը:

4) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները:

5) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ կարող է ընդգրկվել համապատասխան հանձնաժողովների կազմերում:

6) իրավասու է պահանջել իրեն հանձնարարված բնագավառների վերաբերյալ տեղեկատվություն՝ դրանք տրամադրելու իրավասություն ունեցող անձանցից և կազմակերպություններից:

7) համայնքային նշանակության հարցերի՝ իրեն հանձնարարված բնագավառների վերաբերյալ կազմակերպում է քննարկումներ, հրավիրում խորհրդակցություններ՝ Աշխատակազմի աշխատակիցների, համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների, վարչական ղեկավարների և այլ աշխատողների, ինչպես նաև շահագրգիռ այլ անձանց մասնակցությամբ:

8) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ:

9) կատարում է համայնքի ղեկավարի այլ հանձնարարություններ:

VI. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ, ՕԳՆԱԿԱՆԸ ԵՎ ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

32. Համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնը համայնքային հայեցողական պաշտոն է: Համայնքի ղեկավարի խորհրդականը հաշվետու և պատասխանատու է համայնքի ղեկավարի առջև:

Խորհրդականի լիազորությունները սահմանվում են պաշտոնի անձնագրով, որի համար չափանիշներ սահմանում է համայնքի ղեկավարը: Պաշտոնի անձնագիրը, ներկայացված չափորոշիչներին համապատասխան, հաստատում է աշխատակազմի քարտուղարը:

Խորհրդականի պաշտոն կարող են զբաղեցնել բարձրագույն կրթություն ունեցող, հանրային ծառայության առնվազն երեք տարվա կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ ունեցող և 25 տարին լրացած անձինք:

33. Համայնքի ղեկավարի օգնականի պաշտոնը համայնքային հայեցողական պաշտոն է, որը կարող է զբաղեցնել բարձրագույն կրթություն ունեցող անձը:

Համայնքի ղեկավարի օգնականը հաշվետու և պատասխանատու է համայնքի ղեկավարի առջև:

34. Համայնքի ղեկավարի օգնականն իրականացնում է համայնքի ղեկավարի կարգադրությամբ իրեն վերապահված բնագավառի գործառույթներ:

35. Համայնքի ղեկավարի օգնականը՝

1) համայնքի ղեկավարին տեղեկություններ, վերլուծություններ է տրամադրում իրեն հանձնարարված բնագավառի իրավիճակի մասին և ներկայացնում առաջարկություններ՝ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ:

2) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների նախագծերի նախապատրաստմանը:

3) կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում համայնքի ղեկավարին իրեն վերապահված բնագավառի խնդիրների լուծման համար:

4) կազմում է իրեն հանձնարարված բնագավառի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրեր և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարին:

5) կատարում են համայնքի ղեկավարի այլ հանձնարարություններ:

36. Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարի պաշտոնը համայնքային հայեցողական պաշտոն է, որը կարող է զբաղեցնել բարձրագույն կրթություն ունեցող անձը:

Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարը հաշվետու և պատասխանատու է համայնքի ղեկավարի առջև:

37. Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարը՝

1) համայնքի ղեկավարի պաշտոնական տեսակետները ներկայացնում է տեղեկատվության միջոցներին:

2) անցկացնում է ասուլիսներ և ճեպագրույցներ:

3) իր գործունեության ծրագրման և իրականացման վերաբերյալ առաջարկություններ ու վերլուծություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցնելուց հետո հետևում դրանց իրականացմանը:

4) կազմակերպում է համայնքի ղեկավարի հարցազրույցները, ասուլիսները և հանդիպումները մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների հետ:

5) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հանդես է գալիս հայտարարություններով, պարզաբանումներով, հերքումներով:

6) իրականացնում է համայնքի ղեկավարի ելույթների, ուղերձների և նամակների, ինչպես նաև նրա անունից նախապատրաստվող այլ նյութերի նախապատրաստումը:

7) իրականացնում է հասարակայնության հետ և արտաքին կապերի բնագավառի գործառույթներ:

8) լուսաբանում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը:

- 9) լուսաբանում է համայնքում տեղի ունեցող իրադարձությունները և միջոցառումները.
- 10) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ նախապատրաստում է մամուլի հաղորդագրություններ.
- 11) համայնքի ղեկավարին է ներկայացնում համայնքին և համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին վերաբերվող մամուլում առկա հրապարակումները.
- 12) նախաձեռնում է հասարակական կարծիքի ուսումնասիրություններ.
- 13) վարում է համայնքապետարանի պաշտոնական կայք էջի նորությունների և հայտարարությունների բաժինը՝ Աշխատակազմի քարտուղարի հսկողությամբ.
- 14) կազմակերպում է Աշխատակազմում ստացված օտար լեզուներով փաստաթղթերի թարգմանությունները.
- 15) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

VII. ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

38. Վարչական ղեկավարը՝

- 1) բնակավայրի տարածքում գործում է համայնքի ղեկավարի անունից.
- 2) հետևում է բնակավայրի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների իրականացմանը և այդ մասին տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին.
- 3) աջակցում է իր բնակավայրում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքի ղեկավարին և Աշխատակազմի քարտուղարին վերապահված լիազորությունների իրականացմանը.
- 4) համայնքի ավագանու սահմանած կարգին համապատասխան՝ անցկացնում է բնակավայրին վերաբերող հարցերի հանրային լսումներ կամ քննարկումներ և արդյունքների մասին տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին, ինչպես նաև բնակավայրի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ.
- 5) աջակցում և կազմակերպում է իր բնակավայրում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 33-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետով, 37-րդ հոդվածով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով համայնքի ավագանուն, համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին վերապահված լիազորությունների իրականացումը.
- 6) առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին՝ բնակավայրում գտնվող համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու վերաբերյալ.
- 7) մասնակցում է համայնքի Ավագանու նիստերին, իրավունք ունի առաջարկություններ ներկայացնել Ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.
- 8) պատասխանատվություն է կրում վարչական ղեկավարի նստավայրին հատկացված՝ Աշխատակազմին ամրացված, գույքի պահպանության համար.
- 9) առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին՝ բնակավայրում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարելու կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ.
- 10) համայնքի ղեկավարի կողմից լիազորված լինելու դեպքում համայնքի ղեկավարի անունից տալիս է բնակավայրում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվություն.
- 11) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

VIII. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ

39. Աշխատակազմի բաժիններն ապահովում են համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ իրենց մասնագիտական ուղղվածությամբ համապատասխան:

40. Աշխատակազմի բաժինները գլխավորում են բաժնի պետերը, որոնք ենթակա և հաշվետու են համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին:

41. Բաժնի պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են բաժնի աշխատողները:

42. Աշխատակազմի յուրաքանչյուր բաժին անհրաժեշտության դեպքում օժանդակում է մյուս բաժիններին իրենց կանոնադրական լիազորությունները իրականացնելու գործում:

43. Աշխատակազմի բաժինները կարող են ունենալ առանց Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի դրոշմակնիք և ձևաթուղթ:

44. Բաժինների պետերը՝

1) կազմակերպում են բաժնի աշխատանքները, իրենց իրավասության շրջանակներում տալիս են հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը:

2) Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում են բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում՝ բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ:

3) անհրաժեշտության դեպքում՝ համայնքի ղեկավարի և (կամ) Աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում են համայնքապետարանի և (կամ) այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր:

4) ստորագրում են իրենց և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը:

5) համայնքի ղեկավարի և (կամ) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում են իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը:

6) Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում են առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողներին Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում են բաժնի համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը:

7) կազմակերպում են քաղաքացիների դիմումների, առաջարկությունների, բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում Աշխատակազմի քարտուղարին:

8) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում են խորհրդակցություններ, հանդիպումներ, ապահովում այդ խորհրդակցությունների, հանդիպումների արձանագրությունների կազմումը:

9) իրենց անմիջական ենթակա և հաշվետու համայնքային ծառայողների կողմից իրենց կատարած աշխատանքների մասին ներկայացրած կիսամյակային հաշվետվությունների վերաբերյալ տալիս են համապատասխան եզրակացություններ:

10) համայնքի ղեկավարի և (կամ) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում են այլ գործառույթներ:

11) պատասխանատվություն են կրում օրենքների և այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության պահանջները, տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

IX. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

45. Աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմը ղեկավարում է Աշխատակազմի քարտուղարը:
46. Աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրով և այլ իրավական ակտերով:
47. Աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմը ապահովում է Աշխատակազմում աշխատանքային բարենպաստ և անվտանգ պայմանները, վարչական շենքի, աշխատասենյակների և հարակից տարածքների պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակը, տեխնիկական սպասարկումը և պահպանությունը:

X. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

48. Աշխատակազմի գույքը օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքի սեփականությանը փոխանցված և (կամ) համայնքի սեփականությունը համարվող գույքից, համայնքի բյուջեի հաշվին ձեռք բերված գույքից, բարեգործական հատկացումներից, քաղաքացիների, հիմնարկների և կազմակերպությունների նվիրատվություններից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
49. Աշխատակազմի գույքը հաշվառվում է նրա հաշվեկշռում և ենթակա է ամենամյա գույքագրման:
50. Աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու և տիրապետելու իրեն հանձնված գույքը:

XI. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

51. Աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 փետրվարի 2022 թվականի N 03-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ
(ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 102-րդ հոդվածի 3.2-րդ և 4-րդ մասերը, Արովյան համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյանի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուսի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովտի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետարգելի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուրի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կամարիսի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնիի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունը համարել դադարեցված:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, իսկ որոշման 1-ին կետում նշված հիմնարկների գործունեությունը դադարեցված է համարվում իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից կանոնադրությունները հաշվառումից հանելու պահից:

Կողմ-23

Է. ԲԱԲԱՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Դ. ԶԱՐՈՅԱՆ

Տ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Ա. ՄԵՂՐՅԱՆ

Գ. ԳԱԼՍՏՅԱՆ

Պ. ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Տ. ԳԵՂԱՄՅԱՆ

Ձեռնպահ – 0

Դեմ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2022թ. փետրվարի 08
ք. Արուսեան



Է. ԲԱԲԱՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 փետրվարի 2022 թվականի N 04-Ա

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, հիմք ընդունելով Արովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 4-Ա որոշմամբ ընդունված ավագանու կանոնակարգը, Արովյան համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Ստեղծել Արովյան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ և հաստատել դրանց կազմերը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովների ստեղծման օրվանից քսանօրյա ժամկետում հրավիրվում են հանձնաժողովների առաջին նիստերը, ընտրվում են նախագահներ և քարտուղարներ, ընդունվում են հանձնաժողովների աշխատակարգերը:
3. Հանձնաժողովներն իրենց գործունեությունը կազմակերպում են ըստ ընդունված աշխատակարգերի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-23

Է. ԲԱԲԱՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Դ. ԶԱՐՈՅԱՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Տ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա. ԹԵՆԵՔԵԶՅԱՆ

Ա. ՄԵՂՐՅԱՆ

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գ. ԳԱԼՍՏՅԱՆ

Տ. ԳԵՂԱՄՅԱՆ

Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ

Պ. ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

Ձեռնպահ – 0

Դեմ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. փետրվարի 08
ք. Արովյան



Հավելված

Արժանագրի ավագանու
2022 թվականի փետրվարի 08-ի
N 04-Ա որոշման

ԱՐԴԱՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԵՐԸ

1. Զարգացման ծրագրերի, ֆինանսաբյուջետային, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով՝

- | | |
|-----------------------|--------------------|
| 1) Նորայր Զարգարյան | հանձնաժողովի անդամ |
| 2) Տիգրան Ղազարյան | հանձնաժողովի անդամ |
| 3) Արման Մեղրյան | հանձնաժողովի անդամ |
| 4) Պավել Յուզունյան | հանձնաժողովի անդամ |
| 5) Վլադիմիր Առաքելյան | հանձնաժողովի անդամ |

2. Քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի մշտական հանձնաժողով՝

- | | |
|---------------------|--------------------|
| 1) Սեթրակ Սեթրակյան | հանձնաժողովի անդամ |
| 2) Ատոմ Բադալյան | հանձնաժողովի անդամ |
| 3) Արմեն Քոսակյան | հանձնաժողովի անդամ |
| 4) Տիգրան Գեղամյան | հանձնաժողովի անդամ |
| 5) Նաիրի Հակոբյան | հանձնաժողովի անդամ |

3. Կրթության, մշակույթի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով՝

- | | |
|----------------------------|--------------------|
| 1) Ամալյա Գասպարյան | հանձնաժողովի անդամ |
| 2) Անի Թենեքեջյան | հանձնաժողովի անդամ |
| 3) Մարգարիտա Հարությունյան | հանձնաժողովի անդամ |
| 4) Նաիրա Մելիքյան | հանձնաժողովի անդամ |
| 5) Մելինե Գասպարյան | հանձնաժողովի անդամ |

4. Բնակավայրերին, ենթակառուցվածքներին և կոմունիկացիաներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով՝

- | | |
|-----------------------|--------------------|
| 1) Հասմիկ Խաչատրյան | հանձնաժողովի անդամ |
| 2) Էդվին Կարապետյան | հանձնաժողովի անդամ |
| 3) Գևորգ Պողոսյան | հանձնաժողովի անդամ |
| 4) Նորայր Միքայելյան | հանձնաժողովի անդամ |
| 5) Վահե Հարությունյան | հանձնաժողովի անդամ |

5. Իրավական հարցերի մշտական հանձնաժողով՝

- | | |
|-----------------------|--------------------|
| 1) Սեդա Ավետիսյան | հանձնաժողովի անդամ |
| 2) Վահե Հարությունյան | հանձնաժողովի անդամ |
| 3) Տիգրան Գեղամյան | հանձնաժողովի անդամ |
| 4) Մելինե Գասպարյան | հանձնաժողովի անդամ |
| 5) Գոռ Գալստյան | հանձնաժողովի անդամ |



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 փետրվարի 2022 թվականի N 05-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի, Արովյան համայնքի ավագանին **ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արովյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Արովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համար իրենց զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու դեպքում սահմանել հավելավճար՝ իրենց պաշտոնային դրույքաչափի 10 տոկոսի չափով:
4. Ուժը կորցրած ճանաչել Արովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 6-Ա որոշումը:
5. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ Կոտայքի մարզի Արովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու նպատակով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, իսկ որոշման 1-4-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ-22

Է. ԲԱԲԱՅԱՆ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ն. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա. ՔՈՍԱԿՅԱՆ

Հ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Դ. ԶԱՐՈՅԱՆ

Տ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ա. ԹԵՆԵՔԵԶՅԱՆ

Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ

Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Ա. ՄԵՂՐՅԱՆ

Պ. ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Տ. ԳԵՂԱՄՅԱՆ

Ձեռնպահ – 1

Գ. ԳԱԼՍՏՅԱՆ

Դեմ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2022թ. փետրվարի 08
ք. Արուստան



Է. ԲԱԲԱՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Ֆինանսատնտեսագիտական և եկամուտների հաշվառման բաժին
2. Քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժին
3. Քարտուղարության և քաղաքացիների սպասարկման բաժին
4. Իրավաբանական բաժին
5. Առևտրի, սպասարկման, տրասնպորտի և գովազդի բաժին
6. Զարգացման ծրագրերի և գնումների բաժին
7. Սոցիալական ծրագրերի, առողջապահության և տեղեկատվության բաժին
8. Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին



Հավելված 2
Արդյան համայնքի ավագանու
2022 թվականի փետրվարի 08-ի
N 05- Ա որոշման

**ԱՐԴՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Աշխատողների քանակը - 163
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատողների քանակը
1	2	4	5	7
ՔԱՆԱԿԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1	Համայնքի ղեկավար	1	565 000	565 000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	458 000	458 000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	2	440 000	880 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	4		1 903 000
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	3	420 000	1 260 000
5	Համայնքի ղեկավարի օգնական	3	400 000	1 200 000
6	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1	410 000	410 000
7	Ավագանու խմբակցության փորձագետ	2	100 000	200 000
8	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական	1	268 000	268 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	10		3 338 000
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
9	Ադինջ, Գեղաշեն, Արամուս, Բալախովիտ բնակավայրերի վարչական ղեկավարներ	4	360 000	1 440 000
10	Կամարիս, Մայակովսկի, Պտղնի բնակավայրերի վարչական ղեկավարներ	3	330 000	990 000

1	2	4	5	7
11	Վերին Պտղնի, Գետարգել, Կաթնաղբյուր բնակավայրերի վարչական ղեկավարներ	3	300 000	900 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	10		3 330 000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
12	Աշխատակազմի քարտուղար	1	458 000	458 000
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻՆ				
13	Բաժնի պետ	1	410 000	410 000
14	Բաժնի պետի տեղակալ	1	369 000	369 000
15	Գլխավոր մասնագետ	2	332 000	664 000
16	Առաջատար մասնագետ	4	298 000	1 192 000
17	1-ին կարգի մասնագետ	12	268 000	3 216 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	20		5 851 000
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ				
18	Բաժնի պետ	1	410 000	410 000
19	Բաժնի պետի տեղակալ	1	369 000	369 000
20	Գլխավոր մասնագետ - ճարտարապետ	1	332 000	332 000
21	Գլխավոր մասնագետ - հողաշինարար	2	332 000	664 000
22	Գլխավոր մասնագետ	4	332 000	1 328 000
23	Առաջատար մասնագետ	6	298 000	1 788 000
24	1-ին կարգի մասնագետ	4	268 000	1 072 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	19		5 963 000
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ				
25	Բաժնի պետ	1	410 000	410 000
26	Գլխավոր մասնագետ	1	332 000	332 000
27	Առաջատար մասնագետ	5	298 000	1 490 000
